ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

♦ **Հարգանք միության անդամների իրավունքների և ինքնուրույնության նկատմամբ:** Իր մանդատն իրականացնելիս Միությունը հարգում է իր անդամների իրավունքներն ու ինքնուրույնությունը:

♦ **Միության ինքնուրույնությունը (անկախությունը):** Ֆինանսական անկախությունը կարևոր նախապայման է Միության անկողմնակալության ապահովման և քաղաքական ազդեցություններից զերծ մնալու համար:

♦ **Ապակուսակցականությունը:** Միության դիրքորոշումները, նպատակներն ու խնդիրները հիմնված են իր անդամների շահերի վրա՝ անկախ նրանից, թե ինչ քաղաքական հայացքներ ունեն և/կամ որ կուսակցական քաղաքական թիմն են ներկայացնում անդամ համայնքների ղեկավարները:

♦ **Անկողմնակալությունը:** Միությունը միանման գործելակերպ և հավասար մոտեցում է դրսևորում իր անդամների նկատմամբ՝ առանց նախապատվություն տալու որևէ անդամի:

♦ **Արդյունավետությունը:** Միության գործունեության հիմքում ընկած է սահմանափակ ռեսուրսների պայմաններում առավելագույն արդյունքի հասնելու սկզբունքը: Միությունը հաշվի է առնում իր անդամների ընդհանուր առաջնահերթություններն ու շահերը՝ ապահովելով առավելագույն ազդեցություն:

♦ **Արհեստավարժությունը:** Միությունն առաջնորդվում է արհեստավարժության բարձր չափանիշներով, ինչպիսիք են՝ թափանցիկությունը, հաշվետվողականությունը, պատասխանատվությունը, մասնագիտական պատրաստվածությունը, բարեվարքությունը:

♦ **Կոլեգիալությունը և միասնականությունը:** Միությունը հանձն է առել ստեղծելու մի միջավայր, որտեղ որոշումները կայացվում են համատեղ ու փոխհամաձայնեցված կերպով՝ բոլոր անդամների ձայնի պարտադիր հաշվառմամբ: Տարբեր կարծիքներ ունենալով հանդերձ՝ բոլոր անդամների համար ընդունելի են կոնսենսուսով կայացված որոշումները: Միությունը ձգտում է ապահովել իր անդամների միասնականությունը՝ հանդես գալով որպես «մեկ համայնք», որին վստահում են իր բոլոր անդամները՝ իրենց շահերի ու գերակայությունների իրականացման ակնկալիքով:

♦ **Հավասարության սկզբունքը:** Միությունը կարևորում է իր բոլոր անդամների հավասարության սկզբունքը՝ անկախ անդամ համայնքների բնակչության թվից և աշխարհագրական դիրքից: Իր գործունեության մեջ և կանոնադրական մարմինների աշխատանքներում Միությունն ապահովում է իր անդամների համաչափ ներկայացվածության սկզբունքը՝ հավասարակշռություն պահելով գյուղական և քաղաքային համայնքների և տարբեր մարզեր ներկայացնող անդամների միջև:

♦ **Գենդերային հավասարությունը և արդարությունը:** Միությունն ընդունում և խրախուսում է գենդերային հավասարության ու արդարության սկզբունքներն իր գործունեության բոլոր ոլորտներում: Միությունը նպաստում է նաև տեղական ինքնակառավարման համակարգում այդ սկզբունքների կիրառմանը:

♦ **Գիտելիքի կառավարումը:** Միությունը ձգտում է լինել «սովորող» կազմակերպություն, խրախուսում և իրականացնում է գիտելիքի՝ ներառյալ միջազգային լավագույն փորձի ու տեղական ժողովրդավարության միջազգային չափորոշիչների տարածումն իր անդամների շրջանում՝ խթանելով դրանց ներդրումը և իրականացումը Հայաստանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ